ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՍԵՆ ԼԵՎՈՆԻ ՋՈՒԼՖԱԼԱԿՅԱՆ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

(1991-2002թթ.)

Է.00.02 «Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2018

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Պետական Համալսարանում

Գիտական ղեկավար՝ պ.գ.դ. Ա. Գ. Ավագյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ.գ.դ. Ռ. Կ. Կարապետյան
պ.գ.թ. Ա. Է. Հարությունյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018 թ. հուլիսի 10-ին, ժամը 14:00-ին, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 006 «Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ» մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0019, Երևան, Մ. Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018 թ. հունիսի 9-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտքարտուղար՝ պ.գ.թ. Մ. Հ. Ղահրիյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Մերձավոր Արևելքի ավանդաբար բարդ ու խնդրահարույց ներկայանակում թուրք-սիրիական փոխհարաբերությունները առանցքային դերակատարություն ունեն և այդ հարաբերություններում արմատական փոփոխությունների շրջան է համարվում 1991-2002 թվականները, որի ուսումնասիրությանն էլ ուղղված է տվյալ աշխատանքը:

Ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ երկու հարևան երկրների հարաբերությունները, ներառելով պատմական, տարածքային, էներգետիկ և շատ այլ բաղադրիչներ, տասնամյակներ շարունակ գտնվել են մերձավորարևելյան քաղաքական գործընթացների կիզակետում՝ ազդելով ոչ միայն տարածաշրջանային, այլ որոշ դեպքերում նաև միջազգային զարգացումների ընթացքի ու բնույթի վրա:

ԽՍՀՄ փլուզումից և Սառը պատերազմի ավարտից հետո թուրք-սիրիական հարաբերությունները, կրելով պատմական և ընթացիկ տարածաշրջանային գործոնների ուղղակի ազդեցությունը, ենթակրվել են փուլային փոխակերպումների, և համապատասխանաբար երկուստեք հետաքրքրություն ներկայացնող խնդիրների լուծումները բանակցային սեղանից գրեթե տեղափոխվել են պատերազմական հարթակ (խոսքը մասնավորապես 1998թ. նախապատերազմական իրադրության մասին է):

Ինչպես Թուրքիան, այնպես էլ Սիրիան, լինելով տարածաշրջանում առանցքային դերակատարներ, մշտապես փորձել են իրենց քաղաքական առաջնայնություններն ու շահերը առավելագույնս համադրելի դարձնել տարածաշրջանում առկա երրորդ, այդ թվում՝ արտատարածաշրջանային կողմերի շահերին. խոսքը մասնավորապես շահառու այն երկրների մասին է, որոնք ազդեցության շոշափելի ներուժ են ունեցել տարածաշրջանում: Այս քաղաքականության հիմքում եղել է այն համոզումը, որ այդկերպ կարելի էր առավել արդյունավետ ու համալիր կարգավորել երկկողմ օրակարգի խնդահարույց հիմնահարցերը: Հենց այս համատեքստում ներկայացվող հետազոտության մեջ հանգամանալից դիտարկվում է ոչ միայն թուրք-սիրիական, այլև երրորդ երկրների տարածաշրջանային օրակարգերը, առկա խնդիրների ու հակամարտությունների նկատմամբ նրանց մոտեցումները, առանձնահատկություններն ու փոխակերպման միտումները:

Հետազոտության ընտրված հիմնահարցի կարևորությունը, կարծում ենք նաև նրանում է, որ թե՛ Թուրքիան, և թե՛ Սիրիան, թեև որակապես տարբեր, բայց շոշափելի դերակատարում են ունեցել ու այսօր էլ ունեն հայ ժողովրդի պատմական ճակատագրում: Ուստի ներկայումս այդ երկու երկրների փոխհարաբերությունները, այդ թվում՝ դրանց քաղաքական ու ռազմական բնույթի խնդիրները համալիր հասկանալու համար մեծապես կարևոր է քաջատեղյակ լինել նրանց հարաբերությունները պայմանավորող պատմական հիմքերին. 1991-2002թթ. թուրք-սիրիական հարաբերությունների շրջափուլն այս իմաստով մեծապես կարևոր է:

Հետազոտության օբյեկտն ու առարկան: Ներկայացվող հետազոտության օբյեկտը 1991-2002թթ. միջև ընկած ժամանակահատվածում թուրք-սիրիական հարաբերություններն են: Ներկայացվող հետազոտության առարկան ամբողջացնում է 1991-2002թթ. թուրք-սիրիական փոխհարաբերությունների պատմաքաղաքական համատեքստի վերհանման, քաղաքական հարաբերությունների գործընթացային և պատճառական դետերմինանտների հստակեցման, մրցակցության ու հակադրության բազմաբաղադրիչ իրողությունների վերլուծությունը:

Աշխատանքի նպատակն ու խնդիրները: Ատենախոսության թեմայի նպատակն է հետազոտել թուրք-սիրիական փոխհարաբերությունների առանցքային փուլերից մեկը և վերհանել դրանց զարգացման դինամիկայի կապը տարածաշրջանային գործընթացների հետ:

Այդ նպատակին հասնելու համար առանձնացրել ենք հետևյալ խնդիրները.

- ներկայացնել սիրիա-թուրքական հարաբերություններում առկա հիմնախնդիրների ձևավորման պատմական արմատները, հստակեցնել դրանց առաջացման պատճառները,
- ներկայացնել սիրիա-թուրքական հարաբերությունների զարգացման դինամիկան և դրա հիմնական շրջափուլերը,
- դիտարկել ու քննարկել ուսումնասիրվող ժամանակաշրջանում երկկողմ հարաբերություններում առկա խնդիրների վերաբերյալ տարածաշրջանային երկրների դիրքորոշումները, վերհանել նրանց շահերի բախման հնարավոր առանցքները,
- դիտարկվող ժամանակահատվածում ներկայացնել երկկողմ հարաբերություններում առկա նոր քաղաքական միտումները և դրանց հիմնապատճառները,

- ներկայացնել արտաքին գործոնների ազդեցությունն ինչպես յուրաքանչյուր երկրի, այնպես էլ երկկողմ հարաբերությունների վրա,

- ներկայացնել երկու պետությունների արտաքին քաղաքականության ռազմավարության առանձնահատկությունները՝ այդ թվում Սիրիայի կողմից Թուրքիայի հետ առկա խնդիրների լուծման համատեքստում համարաբական գործոնի օգտագործումը, ինչպես նաև Հյուսիսային Սիրիայում սեփական դիրքերն ամրապնդելու Թուրքիայի վարած քաղաքականությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ թուրքական քաղաքագիտական միտքը դիտարկում է 1920թ. Ազգային ուխտում նշված Հալեպ-Քիրքուք գիծը՝ որպես Թուրքիայի Հանրապետության «բնական» սահման:

- գիտական վերլուծության ենթարկել Թուրքիայի Հանրապետության և Սիրիայի Արաբական Հանրապետության հարաբերությունների զարգացման ընթացքը և այդ հարաբերությունների ազդեցությունը տարածաշրջանային զարգացումների վրա:

Ատենախոսության ուսումնասիրության մակարդակն ու գիտական նորույթը:

Ներկայացվող հետազոտության մեջ գիտական նորույթ կարող է համարվել թուրք-սիրիական հարաբերությունների ժամանակակից փուլի հետազոտումը՝ հետսառըպատերազմյան աշխարհաքաղաքական իրողությունների պայմանների, երկկողմ հարաբերություններում առկա պատմական և իրավիճակային խնդիրների միջև առկա կապի համատեքստում: Հանգամանալից ներկայացնելով երկկողմ օրակարգային հիմնահարցերի (տարածքների, ջրի խնդիր, քրդական հարց) ծագումնաբանությունը, զարգացման դինամիկան և մասնավորվելով միջազգային ուժային նոր հարաբերակցության ներքո կողմերի քաղաքական վարքի առանձնահատկությունների վրա՝ հետազոտության մեջ վերլուծում ենք երկու երկրների քաղաքականությունը պայմանավորող ներքին ու արտաքին որոշիչները, նրանց շփումներում առկա դինամիկան:

Հետազոտության մեջ երկկողմ հարաբերությունները քննության են առնվում ներքին ու արտաքին փոխկապվածության համատեքստում՝ մի կողմից դիտարկվելով որպես տարածաշրջանային շահերի ազդեցությունն իրենց վրա կրող, մյուս կողմից՝ մերձավորարևելյան իրողություններում առկա քաղաքական կլիմայի վրա շոշափելի դերակատարում ունեցող կարևոր գործոն:

Հետազոտության մեջ գիտական նորույթ կարող են համարվել սիրիա-թուրքական հարաբերությունների դիտարկումն ինչպես

տարածաշրջանային (պաղեստինյան հիմնահարց) խնդիրների վերաբերյալ կողմերի մոտեցումների ու շահերի խաչման, այնպես էլ երրորդ երկրների՝ Իսրայելի և Լիբանանի հետ փոխհարաբերությունների համատեքստում դիտարկելը՝ դրանով պայմանավորված Սիրիայի ու Թուրքիայի տարածաշրջանային վարքի դրսևորումներում դինամիզմի և օրինաչափությունների արձանագրումը:

Ատենախոսության գիտական նորույթը պայմանավորված է նաև Թուրքիայի արտաքին քաղաքականության վերլուծությամբ՝ 1920թ. Ազգային ուխտում մատնանշված հանրապետության «անհրաժեշտ բնական սահմանագծի» ապահովման կամ հնարավորության դեպքում այդ հատվածին տիրանալու ջանքերի բացահայտման փորձերի համատեքստում: Ինչպես հայտնի է, 1920թ. Ազգային ուխտով Հալեպի ու Մոսուլի շրջանները նույնպես ընդգրկված են Թուրքիայի տարածքի մեջ: Ելնելով դրանից, «սառը պատերազմի» ժամանակաշրջանում Թուրքիան օգտագործում էր իրեն սահմանակից շրջաններում ապրող թուրքմեններին, 1984թ. Իրաքի հետ համաձայնության եկավ 15կմ խորությամբ Իրաքի տարածքում քրդերին հետապնդելու, իսկ 1990-91թթ. և 2003թթ. իրաքյան ճգնաժամի ժամանակ Թուրքիայի իշխանություններն ակտիվորեն քննարկում էին Մոսուլի շրջանին տիրանալու հարցը: Սիրիայի պարագայում այն դրսևորվեց 2015թ-ից իրականացվող գործողությունների՝ թուրքական զորքերի այդ պետության հյուսիսային շրջաններ մուտք գործելու և «անվտանգության գոտի» ստեղծելու քայլերով:

Ուսումնասիրության մեջ գիտական նորույթ է Ադանայի պայմանագրին հաջորդած ժամանակահատվածում 20-րդ դարի 90-ականների ռազմաքաղաքական լարման իրողությունների, այս շրջանում իրականացված պաշտոնական փոխայցելությունների և տնտեսական դինամիկայի ցուցանիշների ներքո սիրիա-թուրքական երկկողմ տնտեսական շփումների դիտարկումն ու վերլուծությունը:

Ատենախոսության ժամանակագրական սահմանները: Ներկայացվող ատենախոսության ժամանակագրական սահմանները ներառում են 1991-2002թթ. թուրք-սիրիական հարաբերություններում առկա իրողությունները, թեև հետազոտության խնդիրները պատշաճ ներկայացնելու ու վերլուծելու նպատակով սույն աշխատանքի շրջանակներում անդրադարձ է կատարվել նաև երկկողմ հարաբերություններում առկա խնդիրների ծագումնաբանությանը և զարգացման պատմական դինամիկային:

Ատենախոսության տեսական-մեթոդական հիմքերը: Ատենախոսության շարադրման գործում օգտագործվել են

պատմահամեմատական, պատմավերլուծական քննության և միջգիտակարգային հետազոտության ընդհանուր մեթոդները, որոնք հնարավորություն են տալիս դիտարկել ատենախոսության մեջ արծարծված խնդիրները մեկ ամբողջության մեջ: Հետազոտության մեջ հիմնական մեթոդ է հանդիսացել երկկողմ ու տարածաշրջանային համատեքստում առկա հիմնախնդիրների դիտարկման միջոցով երկու երկրների քաղաքական դիրքորոշումների վերհանման ու վերլուծության մոտեցումը:

Ատենախոսության կիրառական նշանակությունը: Աշխատության որոշ դրույթներ ու եզրահանգումներ կարող են օգտակար լինել ՀՀ արտաքին քաղաքականության, այդ թվում՝ հայկական սփյուռքի, հատկապես Մերձավոր և Միջին Արևելքի հայկական համայնքների նկատմամբ իրականացվող քաղաքականության տեսանկյունից: Ատենախոսության հիմնական բովանդակությունը, դրույթներն ու եզրահանգումները կարող են հիմք հանդիսանալ արծարծվող հիմնահարցի վերաբերող հետագա ուսումնասիրությունների համար, կիրառվել արևելագիտության, կոնֆլիկտաբանության և այլ ոլորտներին առնչվող դասախոսությունների ժամանակ:

Ատենախոսության փորձաքննությունն ու պաշտոնական հավանությունը: Ատենախոսությունը քննարկվել և հավանության է արժանացել ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդում:

Օգտագործված աղբյուրների և գրականության համառոտ տեսություն: Ատենախոսության աղբյուրագիտական հենքը կազմում են պաշտոնական փաստաթղթերը, Սիրիայի և Թուրքիայի ղեկավարների, բարձրաստիճան մի շարք պաշտոնյաների, քաղաքական գործիչների ելույթներն ու հարցազրույցները, որոնցում արտացոլվել են երկկողմ հարաբերությունները, արտաքին քաղաքականության մոտեցումներն ու դիրքորոշումները: Ատենախոսությունում օգտագործվել է գիտական գրականություն և սկզբնաղբյուրներ հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, արաբերեն և թուրքերեն լեզուներով:

Ներկայացվող ատենախոսության պատրաստման գործընթացում օգտագործվել են միջազգային փաստաթղթեր[1], պայմանագրեր[2],

---

[1]Տես Lauterpacht E., Greenwood C. J., Weller M., The Kuwait Crisis: Basic Documents. Cambridge University Press, 01.01.1991.

[2]Տես Սևրի պայմանագիր, հոդվածներ 62-64 http://wwi.lib.byu.edu/index.php/Section _I,_Articles_1_-_260Resolution 1322 (2000)

միջազգային-իրավական բանաձևեր[3], որոշումներ, միջազգային և տեղական այնպիսի կազմակերպությունների, գիտահետազոտական հաստատությունների և վերլուծական կենտրոնների ամփոփագրեր, զեկույցներ ու հաշվետվություններ, ինչպիսիք են Միջազգային հարաբերությունների հետազոտության Ռուբինի կենտրոնը[4], Մերձավոր Արևելյան քաղաքականության վաշինգտոնյան ինստիտուտը[5], «Նորավանք» գիտակրթական կենտրոնը[6], ՌԴ ԳԱ Մերձավոր Արևելքի ինստիտուտը [7] և այլն:

Ներկայացվող ուսումնասիրության մեջ պատմական փաստերի ու վավերական նյութերի հավաքագրման համար արժեքավոր աղբյուր են հանդիսացել տարալեզու՝ այդ թվում արաբալեզու, անգլալեզու, թրքալեզու և ռուսալեզու մի շարք պարբերականներ, թերթեր, լրատվական գործակալությունների կայքեր, որոնցից հիշատակման արժանի են՝ «Հյուրիեթ», «Միլիեթ», «Ռադիկալ», «Սաբահ», «Թըրքիշ թայմս», «ալ-Վաթան ալ-Արաբի», «ալ-Սաֆիր», «ալ-Աքբար ալ-Մասրի», «աս-Սաֆիր», «Ջումհուրիեթ», «Հաարեց», «Միդլ իստ նյու էջնսի», «Վաշինգտոն փոստ», «Ջերուսալիմ ռիփորթ», «ՌԻԱ Նովոստի», «ԻՏԱՐ-ՏԱՍՍ» և այլն:

Adopted by the Security Council at its 4205th meeting on 7 October 2000, http://daccess-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N00/679/37/PDF/N0067937.pdf? Open Element, Statement Made By İsmail Cem, Foreign Minister, On The Special Security Meeting Held Between Turkey And Syria October 20, 1998 (Translation), http://www.mfa.gov.tr /p_statement-made-by-ismail-cem_-foreign-minister-on-the-special-security-meeting-held-between-turkey-and-syria_br_october-20-1998brunofficial-translationp.en.mfa

[3]Տես ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի №242 բանաձև, http://www.eretzisrael.co.il, IRAQ. Recolutions, http://www.iilj.org/courses/documents/iraqsecuritycouncil resolu tions.pdf

[4]Տես Turkey and the Syrian-Israeli Peace Talks in the 1990s, Rubin Center Research in International Affairs, September 7, 2001, http://www.rubinc enter.org/2001/09/sever-2001-09-07/:

[5]Տես Judith Wrubel, Peacewatch: The Arab-Israeli Peace Process and U.S. Policy, Washington, DC: The Washington Institute for Near East Policy, 1994.

[6]Տես Агаджанян М., Алексадретский Санджак: потерянная родина армян, Норавank Имнадрам, 17.05.2007, http://www.noravank.am/rus/issues/detail.php?ELEMENT_ID=3056

[7]Տես Современная Турция: проблемы и решения, сб. ст., Институт Ближнего Востока, Институт Востоковедения РАН, Москва, 2006.,Сирийская Арабская Республика (Институт Ближнего Востока.) Отв. Ред. Ахмедов В.М., Исаев В.А., Филоник А.О., М., 1997.

Հայ պատմագրության մեջ թուրք-սիրիական հարաբերությունները լուսաբանվում են մի շարք հեղինակների գիտական հետազոտություն-ներում և ուսումնասիրություններում: Այս առումով հետազոտության մեջ առաջադրվող խնդիրների լուծման տեսանկյունից առանձնահա-տուկ կարևոր դերակատարում է ունեցել պրոֆ. Ն. Հ. Հովհաննիսյանի «Արաբական երկրների պատմություն» քառահատոր հիմնարար աշխատությունը, որի երկրորդ, երրորդ և չորրորդ հատորներում ներկայացված մի շարք մոտեցումներ, պատմական իրողությունների մեկնաբանություններ ու վերլուծություններն արտացոլվել են ատենախոսության առանձին հատվածներում[8]: Թեկնածուական ատենախոսության պատրաստման ժամանակ կարևոր դերակատա-րում են ունեցել հայ մի շարք գիտնականների ու հետազոտողների՝ Ռ.Կարապետյանի [9], Ա.Բայրամյանի [10], Կ.Հարությունյանի [11], Ա.Հարությունյանի[12], Մ.Աղաջանյանի, Ա.Իսրայելյանի[13], Վ.Մնացականյանի[14] և այլոց ուսումնասիրություններն ու մենագրությունները: Ներկայացվող հետազատության ընտրված թեմայի՝ տարբեր դրվագների ու պատմական հանգրվանների մշակման տեսանկյունից կարևոր են եղել ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի կողմից հրատարակվող «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», «Մերձավոր Արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ» հոդվածների ժողովածուները:

---

[8]Տես Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. 1-4., Երևան, 2003-2007:

[9]Տես Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Երևան, 2003թ.:

[10]Տես Բայրամյան Ա. Ա., Ալեքսանդրետի սանջակի իրավական ստատուսը և քաղաքական խմբավորումները: 1920-1930-ական թվականներ, ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, հ. 12, Երևան, 1964:

[11]Տես Հարությունյան Կ., Ջուրը կարևորագույն ռեսուրս Մերձավոր Արևելքում, Մերձավոր Արևելք (I): Պատմություն, քաղաքականություն, մշակույթ: Հոդվ. ժող. ՀՀ ԳԱԱ Արևելագիտ. ինս-տ, Երևան, 2002թ:

[12]Տես Հարությունյան Ա., Քրդական գործոնի աշխարհաքաղաքական դերը // «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, հոդվածների ժողովածու, հ. 19, Երևան, 2000թ.:

[13]Տես Իսրայելյան Ա., Թուրքիայի արտաքին քաղաքականության առանձնահատկություններն Արդարություն և զարգացում կուսակցության կառավարման տասնամյակում (2002-2012թթ.), Երևան, VMVPrint, 2016:

[14]Տես Մնացականյան Վ., Սիրիա-Թուրքական հարաբերություններն արդի փուլում (1998-2009թթ.), ՀՀ ՊՆ Կանայանի անվ. ՌՀԻ, Երևան, 2010թ.:

Հետազոտության թեմայի՝ թուրք-սիրիական հարաբերությունների առանձին դրվագներ լուսաբանվում են նաև արտերկրյա մի շարք հետազոտողների հիմնարար ուսումնասիրություններում և մենագրություններում: Մասնավորապես՝ թուրք-սիրիական հարաբերությունների ամենատարբեր՝ այդ թվում երկկողմ ու բազմակողմ բաղադրիչներին համապարփակ անդրադարձ է կատարել Դ.Փայփսը[15], ում աշխատությունները հիմնվում են երկու երկրների փոխհարաբերություններում առկա պատմական խնդիրները տարածաշրջանային ու միջազգային ուժային կենտրոնների շահերի համատեքստում հետազոտելու սկզբունքի վրա:

Ներկայացվող ուսումնասիրության մեջ թուրք-սիրիական հարաբերություններում առկա տարածքային խնդիրների՝ մասնավորապես Ալեքսանդրետի սանջակի հիմնահարցը հանգամանորեն դիտարկվել ու վերլուծվել է Ա.Ա. Բայրամյանի[16], Ա. Սանջյանի[17], Ա. Աբրահամյանի[18] հետազոտությունների հիմքի ներքո: Տարածքային խնդրին ու դրանով պայմանավորված երկու երկրների փոխհարաբերությունները հանգամանալից դիտարկվում և ուսումնասիրվում են նաև Մ.Աղաջանյանի հոդվածում [19]:

Ատենախոսության մեջ թուրք-սիրիական հարաբերությունների կարևոր հաջորդ հիմնահարցին՝ ջրի խնդրի ուսումնասիրության ժամանակ մեր կողմից դիտարկվել են գիտական բազմաթիվ աշխատություններ, որոնցից կառանձնացնենք Կ.Հարությունյանի[20], Ն. Մոսակիի[21], Ա. Չարքօղլուի[22], Մ. Ջոեջաթի (Murhaf Jouejati)[23], Յ. Ինանի[24], Պ. Սիլի [25] գործերը:

---

[15]Տես Pipes D. Syria beyond the peace process.Policy paper.Washington, 1996.

[16] Տես Պայրամյան Ա. Ա.,Ալեքսանտրետի սանճակի հարցը և միջազգային դիվանագիտությունը 1918-1939. Լիբանան, 1999թ.:

[17]Տես Sanjian A. The Sanjak of Alexandretta: its impact on the Turkish-Syrian-French relations 1939-1956// Middle East Journal, JV» 4, Volume 10, Autumn 1956.

[18]Տես Aprahamian Arménag, Le Sandjak D'alexandrette 1934-1939, http://www.western-armenia.eu/stat.gov.wa/fr /2012/Le_Sandjak_d_Alexandrette_Rapport_n3.pdf, 2008.

[19]Տես Агаджанян М., Алексадретский Санджак: потерянная родина армян, Нораванк Имнадрам, 17.05.2007, http: //www.noravank.am/rus/issues/detail.php?ELEMENT_ID=3056

[20]Տես Հարությունյան Կ., Ջուրը կարևորագույն ռեսուրս Մերձավոր Արևելքում, Մերձավոր Արևելք (I): Պատմություն, քաղաքականություն, մշակույթ: Հոդվ. ժող. ՀՀ ԳԱԱ Արևելագիտ. ինս-տ, Երևան, 2002թ:

[21]Տես Мосаки Н.З., Проблема проекта Ылысу в турецко-иракско-сирийских отношениях, Институт Ближнего Востока, 10.07.2007, www.iimes.ru

Ատենախոսության շարադրման ընթացքում որոշ բարդությունների հանդիպեցինք՝ կապված քրդական հարցի, քրդական քաղաքական շարժման դինամիկայի գիտական վերլուծության հետ, քանի որ տարածաշրջանային և երկկողմ հարաբերությունների այս բարդ թնջուկը հաճախ ներկայացվում է ոչ օբյեկտիվ՝ շահագրգիռ կողմերի շահերին ծառայեցնելով: Քրդական հարցի հետազոտության ժամանակ օգտվել ենք գիտնական մի շարք հետազոտողների ուսումնասիրություններից, մենագրություններից, հոդվածներից, որոնց հեղինակներից կհիշատակենք մի քանիսին՝ Մ. Հասրաթյան[26], Կ.Բուրկայ[27],Ե.Վ. Զագոնովյա[28], Ս. Դրուժիլովսկի[29], Ա. Նաբիևա[30], Ա. Զուբկովա[31], Դ. Մակ Դոուել[32], Մ. Սոմեր[33], Ֆ. Ռոբինս[34], Ջ. Բրաուն[35], Ռ. Օլսոն[36] և այլք:

---

[22]Տես Ali Carkoglu, Mine Eder, "Domestic concerns and the water conflict over the Euphrates-Tigris river basin", Middle Eastern Studies, Vol. 37, No. 1, 2001.

[23]Տես Murhaf Jouejati. Water Politics as High Politics: the Case of Turkey And Syria // in Henry J, BARKEY's ed. «Reluctant Neighbour: Turkey's Role in The Middle Eas» (US Institute of Peace Press,), Washington D.C, 1996.

[24]Տես Y. Inan, "The law of international watercourses and the Middle East", http://sam.gov.tr/wp-content/ uploads/2012 /01/Yuksel-Inan.pdf

[25]Տես Patrick Seale. Turkey and Syria: the war over water // Middle East International, N4, 04.07.1999.

[26]Տես Гасратян М.А., Курды Турции в новейшее время, Издательство «Айастан», Ереван, 1990.

[27]Տես Буркай К., “Курдский вопрос - история и современность”, http://www.aha.ru/~said/kamal.htm

[28]Տես Загоновя Е.В., Курдский вопрос в Сирии, Вост. Сборник, н 6, М. 2004.

[29]Տես Дружиловский С.Б., “Влияние иракского кризиса на урегулирование курдской проблемы в Турецкой Республике”, Сборник статей “Курдский вопрос в Западной Азии в начале XXI века”, ИБВ, М., 2006.

[30]Տես Набиева А.Р., Курдская проблема в свете интеграции Турции в ЕС // сб. Ст. Современная Турция: проблемы и решения, Институт Ближнего Востока, Институт Востоковедения РАН, Москва, 2006.

[31]Տես Зубкова А. И., Курдский вопрос и политическая стабильность в Турецкой Республике // Политическая стабильность: методология сравнительных исследований, анализ региональных проблемных зон. Коллективная монография / С.А. Баров, А.И. Зубкова, В.Г. Иванов, А.И. Чихринова, А.О. Ярославцева., РУДН, М., 2012.

[32]Տես Mc Dowall, David. A Modern, History of the Kurds. London, Tauris & Co., 2007.

[33] Տես Somer M., “Turkey’s Kurdish Conflict”, Middle East Journal, Vol. 58, No 2, Spring 2004.

[34]Տես Philip Robins. The overlord state: Turkish Policy and the Kurdish Issue// International affairs, K« 4, Volume 69, October 1993.

Սիրիայի արտաքին քաղաքականության դրսևորումների վերաբերյալ կարևոր մոտեցումներ են պարունակում Է. Զիսերի[37] և Վ. Ահմեդովի[38] ուսումնասիրությունները, ովքեր իրենց հետազոտությունների նյութ են դարձնում Բ. Ասադի արտաքին քաղաքականությունը, ինչպես նաև այն տրանսֆորմացիոն գործընթացները, որոնք տեղ գտան սիրիական արտաքին ու ներքին քաղաքականության մեջ 20-րդ դարի 90-ականների ավարտին: Նշենք, որ ատենախոսության մեջ օգտագործվել են նաև մի շարք թուրք հեղինակների[39] աշխատություններ, որոնք սակայն շատ դեպքերում աչքի են ընկնում Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության մոտեցումների ներկայացման որոշակի կողմնակալությամբ և թուրքակենտրոնությամբ: Հետազոտության պատրաստման ժամանակ արաբ հեղինակները ևս ուշադրության կենտրոնում են եղել[40]:

---

[35] Տես Brown J., The Turkish Imbroglio: Its Kurds, The Annals of the American Academy of Political and Social Science, Vol. 541, Sep., 1995.

[36] Տես Robert Olson, The Kurdish Question and Turkey's Foreign Policy, 1991-1995: From the Gulf War to the Incursion Into Iraq// Journal of South Asian and Middle Eastern Studies, N 1,Volume 19, Fall 1995, էջ 105-107:

[37] Տես Eyal Ziser., Asad's Legacy: Syria in Transition, C. Hurst & Co. Publishers, https://books.google.am/books?id=_KR89t0433sC&pg= PR18&lpg=PR18&dq=Eyal+Zisser.+Asad%27s+Legacy:+Syria+in+Transition, +C.+Hurst+%26+Co.+Publishers,&source=bl&ots=gh8pVOIv_o&sig=K1id3amTD4-EtYIlceZRBjIzJ9g&hl=ru&sa=X&redir_esc=y#v=onepage&q=Eyal%20 Zisser.%20Asad's%20Legacy%3A%20Syria%20in%20Transition %2C%20C.%20Hurst %20%26%20Co .%20Pub lishers%2C&f=false, 2001.

[38]Տես Ахмедов В.М. Сирия при Башаре Асаде. Региональный опыт модернизации в условиях внешней нестабильности., М., 2005.

[39] Տես Fuat Dündar, Modern Türkiye'nin Şifresi. İttihat ve Terakki'nin Etnisite Mühendisliği (1913-1918) İstanbul, 2008; Bağımsızlıktan Arap Baharı'na Suriye İç ve Dış Politika, Editörler: Mehmet Akif Okur – Nuri Salık, İstanbul, 2016.

[40]محمدعبد الناصرسرور ,التعاون (الإسرائيلي، التركي) فيالسياسة المائية خلال عقد التسعينات، سلسلة الدراسات الإنسانية، مجلة الجامعة الإسلامية
.غزة ٢٠٠٨ص، ١٨٩

دراسات الشرق الاوسط من كلية الاداب ,السياسة الخارجية لتركيا تجاه سوريا٢٠٠٢-٢٠٠٨,محمدعبد العاطي التلولي و العلوم الانسانة بجامعة الازهر-غزة ٢٠١١مص، ٣٠-٣٢

جلال عبد الله معوض ،صناعة القرار في تركيا والعلاقات العربية التركية، ، ط١ مركز دراسات الوحدة العربية ، بيروت ١٩٩٨ص،١٩٧- ١٩٨

Ներկայացվող աշխատության մեջ Թուրքիայի և Սիրիայի փոխհարաբերությունները դիտարկվում են ոչ միայն երկկողմ ձևաչափում, այլև իրենց մեջ ներառում են այդ երկրների հետ տարածաշրջանային և միջազգային տերությունների՝ ԱՄՆ, Իսրայելի, Իրանի, Սաուդյան Արաբիայի, Իրաքի ու տարածաշրջանային կազմակերպությունների (Արաբական երկրների լիգայի և Պարսից ծոցի արաբական երկրների համագործակցության խորհրդի) մրցակից կամ դաշնակից շահերը, որոնց հանգամանալից անդրադարձ է արվել Բ. Մուհրիջի[41], Ա. Գերշի[42], Օ. Բենգիոյի[43], Ջ. Ֆուլլերի[44], Ռ. Օլսոնի[45], Ֆ. Կոնովիչի[46] և այլոց աշխատություններում:

Թուրք-սիրիական հարաբերություններին նվիրված հետազոտությունների մեջ շոշափելի ներդրում է ունեցել Ա. Հարությունյանը[47], ով գիտական լուրջ աշխատանք է կատարել երկու երկրների փոխհարաբերությունների, այնտեղ առկա խնդիրների, դրանց սկզբնապատճառների, զարգացման դինամիկայի ու դրա ամենատարբեր փուլերում տարաբնույթ դրսևորումների, տարածաշրջանային համատեքստում երկկողմ փոխհարաբերությունների փոխակերպման գործընթացների վերհանման ու վերլուծության առումով:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից (որոնցից յուրաքանչյուրը համապատասխանաբար կազմված է ենթագլուխներից),

---

[41]Տես Мурхидж Б., Позиции некоторых арабских стран в иракско-кувейтском конфликте / Ближний Восток, http://www.middleeast.org.ua/research/kuveyt2.htm , 30.08.2007.

[42] Տես Gersh A., Turkish-Israeli-Syrian Relations and Their Impact on the Middle East Middle East Journal, Vol. 52, No. 2 (Spring, 1998).

[43] Տես Bengio O., The Turkish-Israeli Relationship, New York, Palgrave Mac Millan, 2004.

[44] Տես Fuller G.E., 'Turkey's New Eastern Orientation` ın Tur-key's New Geopolitics: From the Balkans to Western China. Westview press. 1993.

[45] Տես Robert Olson, Turkey's Relations with Iran, Syria, Israel, and Russia, 1991-2000: The Kurdish and Islamist Questions, in Turkish Studies Association Bulletin. 2001.

[46]Տես Конович Ф.Е. Турецко-Израильские отношения в 90-е годы (военно-политический аспект), сб. статей «Востоковедный сборник», вып. 4, Москва, 2003.

[47]Տես Арутюнян А. Э., К Вопросу о взаимоотношениях между Турцией и Сирией в конце 20-го-начале 21-го вв. // сб. статей «Современая Турция: проблемы и решения», М., 2006., Арутюнян А. Э., Турецко-сирийские отношения на рубеже веков (1980-е годы - начало XXI века), Диссертация на соискание ученой стенени канддата исторических наук. Москва- 2007.

եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Ներածությունում ներկայացված են թեմայի արդիականությունը, նպատակներն ու խնդիրները, գիտական նորույթը, հետազոտության ժամանակագրական սահմանները, տեսական-մեթոդաբանական հիմքերը, կիրառական նշանակությունը, ուսումնասիրության խնդիրների վերաբերյալ աղբյուրների և գրականության տեսությունը:

Ատենախոսության առաջին գլուխն ունի «**Թուրք-սիրիական փոխհարաբերություններում առկա պատմական հիմնախնդիր-ները»** վերնագիրը և կազմված է երեք ենթագլխից:

Առաջին գլխի առաջին ենթագլխում, որն ունի «**Ալեքսանդրետի սանջակի հիմնախնդիրը թուրք-սիրիական հարաբերություններ-ում»** խորագիրը, հանգամանալից ներկայացվում ու վերլուծության է ենթարկվում թուրք-սիրիական հարաբերություններում առկա տարածքային փոխադարձ հավակնությունների խնդիրը՝ առավելապես կենտրոնանալով Ալեքսանդրետի սանջակի պատկանելության հետ կապված հարցի պատմական արմատների վերհանման, Սիրիայում ֆրանսիական մանդատային կառավարման ժամանակահատվածում այդ խնդրի շուրջ ձևավորված իրավիճակի ներկայացման, այդ տարածքի նկատմամբ հավակնություններ ունեցող կողմերի դիրքորոշումների ու քայլերի հստակեցման, ինչպես նաև Ազգերի լիգայի միջոցով խնդրի միջազգայնացման, 1937թ-ից Սանջակի կառավարման նպատակով Սահմանադրության ընդունման և այդ ժամանակահատվածում տեղ գտած ֆրանս-թուրքական բանակցությունների գործընթացի դիտարկման, սանջակում ներքաղաքական անկայունության և որպես այդ ամենի արդյունք՝ Սիրիայի կողմից Ալեքսանդրետի Սանջակը կորցնելու իրողությունների, Թուրքիայի նկատմամբ դրանով պայմանավորված քաղաքակնության վրա:

Երկրորդ ենթագլուխը, որը վերնագրված է «**Ջրային հիմնահարցը թուրք - սիրիական հարաբերություններում 20-րդ դարի 80-ականների վերջին»,** նվիրված է թուրք-սիրիական փոխհարաբերությունների օրակարգի կարևորագույն մյուս հիմնահարցին՝ ջրային ռեսուրսների օգտագործման խնդրին: Ատենախոսության մեջ նշվում է, որ ինչպես թուրք-սիրիական փոխհարաբերություններում, այնպես էլ տարածաշրջանային մակար-դակում ջրային հիմնահարցը պայմանավորված էր այդ երկրների (ինչպես նաև Իրաքի և Լիբանանի) կողմից իրենց տարածք մուտք գործող և այդ տարածքով հոսող ջրային ռեսուրսների անհատական և

կոլեկտիվ օգտագործման շուրջ կողմերի տարակերպ մոտեցումներով, ինչպես նաև այդ հանգամանքը հարևան-մրցակից երկրների նկատմամբ որպես քաղաքական լծակ կիրառելու իրողություններով: Ենթագլխում երկկողմ հարաբերություններում ջրային հիմնահարցը հետազոտվել է ինչպես երկու երկրներում առկա ջրային ռեսուրսների ծավալի ու օգտագործման, այնպես էլ քաղաքական, իրավական և միջազգային-իրավական դիտանկյուններից:

Երրորդ ենթագլուխն ունի **«Քրդական» հիմնախնդիրը Թուրքիայի և Սիրիայի հարաբերություններում մինչև 20-րդ դարի 80-ականների վերջ»** վերնագիրը: Աշխատանքի այս մասում անդրադարձ է կատարվում երկկողմ հարաբերություններում «քրդական» գործոնի դերակատարմանը, որը մեծ ազդեցություն ունի հատկապես Թուրքիայի ներքին ու արտաքին քաղաքականության վրա: Հետազոտության մեջ «քրդական» գործոնն ուսումնասիրվում է տարածաշրջանային մակարդակում նրա՝ աշխարհագրական ներկայացվածության, բնակության երկրներում քանակական տվյալների դիտարկման, այդ երկրների քաղաքական կյանքում ներգրավվածության տարբեր աստիճանների, տարածաշրջանի երկրների կողմից այդ գործոնը սեփական շահերի տեսանկյունից օգտագործելու իրողությունների ներքո: Հետազոտության մեջ որպես քրդական գործոն հիմնականում դիտարկվում է Քրդական աշխատավորական կուսակցության (ՔԱԿ) գործունեությունը երկկողմ փոխհարաբերությունների համատեքստում:

Ատենախոսության երկրորդ գլուխն ունի «**Թուրք-սիրիական հարաբերությունները 20-րդ դարավերջին և 21-րդ դարասկզբին տարածաշրջանային և համաշխարհային գործընթացների ներքո»** անվանումը: Այն բաղկացած է հինգ ենթագլուխներից:

Առաջին ենթագլուխում, որն ունի «**Թուրքիայի և Սիրիայի մոտեցումները 1990-91թթ. Իրաքյան ճգնաժամի վերաբերյալ»** վերնագիրը, դիտարկվում և ներկայացվում են 1990-91թթ. Իրաքյան ճգնաժամի ի հայտ գալու պատմաքաղաքական հիմքերը և ռազմաքաղաքական դինամիկան, արաբական աշխարհի և միջազգային կազմակերպությունների՝ ՄԱԿ-ի արձագանքը Քուվեյթի բռնակցմանը, Պարսից ծոցի արաբական երկրների խորհրդի ու Արաբական երկրների լիգայի որդեգրած մոտեցումները: Վերոնշյալի համատեքստում հանգամանալից դիտարկվում և վերլուծվում են Սիրիայի ու Թուրքիայի քաղաքական մոտեցումներն ու շահերը, դրանց փոխակերպման ուղեգիծը ԱՄՆ-ի տարածաշրջանային

քաղաքականության և Իրանի՝ հակաարևմտյան ավանդական մոտեցումների ներքո:

Ատենախոսության երկրորդ գլխի երկրորդ ենթագլուխը, որ ունի **«Թուրքիայի և Սիրիայի դիրքորոշումները տարածաշրջանային հիմնախնդիրների վերաբերյալ»** վերնագիրը, բաղկացած է երկու մասերից: Ենթագլխի առաջին մասի վերնագիրն է «Պաղեստինի հիմնահարցը թուրք-սիրիական հարաբերություններում 90-ական թվականներին», ուր ներկայացվում են Պաղեստինյան հիմնախնդրի կարգավորման գործընթացի բանակցային մի շարք դրվագներ, այդ գործընթացում ԱՄՆ-ի միջնորդական առաքելության դերն ու նշանակությունը, Սիրիայի շահերն ու որդեգրած քաղաքականությունը: Մյուս կողմից դիտարկվում և վերլուծվում են այդ գործընթացներում Թուրքիայի՝ 20-րդ դարի 90-ականներից ակտիվացած քաղաքական և տնտեսական շահերն ու որդեգրած մոտեցումները:

Ենթագլխի երկրորդ մասում, որն ունի **«Լիբանանի հիմնահարցը թուրք-սիրիական փոխհարաբերություններում 20-րդ դարի 90-ական թվականներին»** վերնագիրը, անդրադարձ է կատարվում Լիբանանում 1976-ից 1989-ը ձգված քաղաքացիական պատերազմի արդյունքում ձևավորված ներքաղաղաքական գործընթացներին՝ կենտրոնանալով դրանց մեջ սիրիական գործոնի՝ այդ թվում նաև ռազմական ներկայության ապահովման քաղաքական իրողություններին, մյուս կողմից թուրք-սիրիական հարաբերությունների ուսումնասիրության ներքո արձանագրվում է, որ Լիբանանի դերը Անկարայի համար պայմանավորված էր Սիրիայի գործոնով և հատկապես ՔԱԿ-ի մարտիկների՝ Բեքաայի հովտում հայտնվելու հանգամանքներով:

Ատենախոսության երկրորդ գլխի երրորդ ենթագլուխն ունի **«Ջրային ռեսուրսների բաշխման խնդիրը և քրդական հարցը Թուրքիայի ու Սիրիայի հարաբերություններում 1990-ական թվականներին»** վերնագիրը և կազմված է երկու հատվածից: Առաջին հատվածը ունի **«Ջրի հիմնահարցը երկկողմ հարաբերություններում 90-ականներին»** վերնագիրը և նվիրված է 20-րդ դարի 90-ականներին թուրք-սիրիական հարաբերություններում առկա ջրի հիմնահարցին, որը Թուրքիայի կողմից օգտագործվում էր որպես քաղաքակն լծակ, մինչդեռ Սիրիան դրան փորձում էր հակադրվել միջազգային իրավունքի, միջազգային կազմակերպությունների՝ ՄԱԿ-ի, ԱԵԼ-ի ձևաչափում՝ զուգահեռաբար փորձելով իր քայլերին ներգրավել նաև Իրաքին:

Երկրորդ ենթագլխի հաջորդ հատվածում, որն ունի **«Քրդական հիմնահարցը թուրք-սիրիական հարաբերություններում 1990-ական թթ-ին»** վերնագիրը, հանգամանորեն ներկայացվում է 20-րդ դարի 90-ականներին քրդական խնդրի շուրջ թուրք-սիրիական շփումների ներկապնակը, որտեղ քրդական բաղադրիչը դիտարկվում է մի քանի ենթաբաղադրիչների համատեքստում, որոնք նշյալ ժամանակահատվածում երկու երկրների բանակցային օրակարգի կարևոր մասն էին. մասնավորապես՝ Սիրիայի աջակցության հարցը ՔԱԿ-ին, Սիրիայում (ինչպես նաև Լիբանանում) ՔԱԿ-ի ռազմական հենակետերի առկայության և Ա.Օջալանին ապաստան տրամադրելու խնդիրը, ինչպես նաև Թուրքիայի տարածքում՝ հատկապես Հաթայի երկրամասում, քրդական ուժերին օժանդակելու հարցը:

Հետազոտության երկրորդ գլխի չորրորդ ենթագլուխն ունի **«Իսրայելի գործոնը թուրք-սիրիական հարաբերություններում 1991-2002 թվականներին»** վերնագիրը և նվիրված է Իսրայելի հետ երկու երկրների հարաբերություններին: Հետազոտության այս հատվածում քննվում է 1991-2002թթ. սիրիա-իսրայելական և թուրք-իսրայելական հարաբերությունները, որոնք ձևավորվեցին որակապես տարբեր հիմքերի վրա. եթե սիրիա-իսրայելական փոխհարաբերություններն ածանցվում էին տարածքային, ջրային խնդիրների շուրջ ԱՄՆ-ի նախաձեռնած բանակցային օրակարգերից, ապա թուրք-իսրայելական հարաբերությունների հիմքն արդյունավետ համագործակցության ծավալումն էր ռազմատեխնիկական և տնտեսական ոլորտներում, փոխադարձ անվտանգության տարածաշրջանային մարտահրավերներին արդյունավետ ու համատեղ ջանքերով արձագանքելու առաջնահերթությունը:

Ատենախոսության երկրորդ գլխի վերջին ենթագլխում, որ ունի **«Թուրքիայի և Սիրիայի հարաբերությունների զարգացման դինամիկան Ադանայի պայմանագրից մինչև 2002թ.»** վերնագիրը, անդրադարձ է արվում 20-րդ դարի 90-ականների վերջին թուրք-սիրիական փոխահարաբերություններում առկա նախապատերազմական լարվածության իրողություններին, որը մեծ դժվարությամբ հաղթահարվեց միջնորդ երկրների ջանքերի ու 1998թ. Ադանայի պայմանագրի կնքման արդյունքում: Ենթագլխում դիտարկվում և կոնկրետ ցուցիչներով (լարման կոր և պաշտոնական փոխայցելությունների քանակ) վերլուծության է ենթարկվում Ադանայի պայմանագրի անդրադարձը երկու երկրների փոխհարաբերություններում գործակցային միտումների ի հայտ գալու վրա. մասնավորապես՝ դիտարկվում են տնտեսական

հարաբերությունների աճի միտումները, առկա պատմական խնդիրների լուծման կողմերի հանձնառությունը և հարաբերությունների կարգավորման հեռանկարները՝ Սիրիայում և Թուրքիայում պետական քաղաքական նոր էլիտայի իշխանության գալու համատեքստում:

Եզրակացություն բաժնում ամփոփվել են ատենախոսության հիմնական դրույթները.

- Թուրք-սիրիական բազմամյա առնչությունների ընթացքում առաջացել են մի շարք հիմնախնդիրներ, որոնք պատմական և աշխարհաքաղաքական տարբեր պատճառների ու հանգամանքների բերումով մինչ օրս լուծում չեն ստացել: Դրանցից կարելի է առանձնացնել տարածքային հավակնությունները, մասնավորապես՝ Ալեքսանդրետի սանջակի տարածքային վեճը, ջրային ռեսուրսների և քրդական հարցերը: Հենց այս խնդիրների չկարգավորված լինելը պատճառ դարձավ, որպեսզի երկու հարևանները 1998թ. հայտնվեին պատերազմի վտանգի առջև:
- Թուրքիայի ճնշման և հիմնականում Եգիպտոսի ու Իրանի միջնորդական առաքելության արդյունքում Սիրիայի հետ 1998թ. հոկտեմբերին ստորագրվեց Ադանայի պայմանագիրը, որից հետո թուրք-սիրիական փոխհարաբերություններում թուլացավ լարվածության մթնոլորտը և նոր հնարավորություններ բացվեցին առկա տնտեսական ներուժի բացահայտման և իրացման հեռանկարների առումով: 1998թ. Ադանայի պայմանագիրը երկու պետությունների միջև առկա խնդիրների լուծումները տեղափոխեց բանակցային դաշտ՝ դրանով նախկին հակառակորդների շփումը դարձնելով կառուցողական ինչպես երկկողմ, այնպես էլ տարածաշրջանային հարթակներում:
- Թեև Ալեքսանդրետի սանջակի հիմնահարցի կարգավորման ուղղությամբ Ադանայի պայմանագրի ստորագրումից հետո նախաձեռնվեցին կարևոր մի շարք քայլեր, Սիրիան մինչ օրս էլ ձեռնպահ է Թուրքիայի տարածքային ամբողջականությունը ճանաչելու վերաբերյալ պաշտոնական հայտարարություններ կատարելուց: Այսինքն, սա մի խնդիր է, որը 2011թ. ի վեր Սիրիայի պետականությանը նետված ծանրագույն մարտահրավերները Դամասկոսի կողմից հաղթահարելուց հետո, կարող է կրկին վերադառնալ թուրք-սիրիական հարաբերությունների օրակարգ:
- ԽՍՀՄ փլուզումն ու Սառը պատերազմի ավարտն ուղղակիորեն ազդեցին ինչպես Թուրքիայի, այնպես էլ Սիրիայի արտաքին քաղաքականության վրա: Դամասկոսը, գիտակցելով աշխար-

հաքաղաքական իրադրության փոփոխման հնարավոր հետևանքները, փոխզիջումային քայլեր էր ձեռնարկել Սիրիայի հանդեպ Արևմուտքի դիրքորոշումն առավել մեղմ դարձնելու ուղղությամբ: Այս համատեքստում Սիրիայի համար կարևորվեց նաև Թուրքիայի հետ հարաբերությունների համալիր վերանայումը: Խոսքը հատկապես 2001թ. սեպտեմբերի 11-ի հայտնի դեպքերին հաջորդած ժամանակահատվածի մասին է, երբ Սիրիայի համար հրամայական դարձավ Թուրքիայի հետ հարաբերությունների մերձեցումը՝ իսրայելա-պաղեստինյան և իրաքյան ճակատներում վերջինիս հետ համագործակցելու կամ գոնե այդ երկրի չեզոքությունն ապահովելու նպատակով:

- Իրաքի դեմ 1991թ. ռազմական գործողությունները փոխեցին Մերձավոր Արևելքի քաղաքական պատկերը, ինչը ստիպեց տարածաշրջանի երկրներին՝ բարեկամ, թե ավանդական հակառակորդ, վերանայել սեփական առաջնահերթությունները, դիրքորոշումներն ու հարաբերությունները հարևանների հետ: Տարածաշրջանի նկատմամբ Վաշինգտոնի ռազմատնտեսական ճնշումների քաղաքականությունը, որի դրսևորումներից մեկն էլ ի նպաստ սեփական շահերի քրդական խաղաքարտի օգտագործումն էր, լրացուցիչ խթան դարձավ Սիրիայի և Թուրքիայի համար՝ փոխզիջման միջոցով հարթելու գոյություն ունեցող հարցերը: Փաստացիորեն, դրանք տեղափոխվեցին համատեղ ջանքերի հարթություն:
- 1991-2002թթ Քրդական հարցը շարունակում էր մնալ Թուրքիայի թիվ մեկ ներքաղաքական խնդիրը, որը միաժամանակ Անկարայի վրա արտաքին շարունակական ճնշումների ու ազդեցության պատճառ էր: Սիրիայի համար այն նույնպես ոչ պակաս նշանակալի քաղաքական հետևանքներ ուներ: Սիրիան օգտագործում էր PKK-ին որպես Թուրքիայի վրա ճնշման միջոց, սակայն, 1998 թ-ից հետո քրդական հարցում Թուրքիայի հետ համագործակցությունը Դամասկոսի շահերից էր բխում: Սիրիայի այս դիրքորոշումը տրամաբանական է, քանզի լինելով Իրաքի տարածքային ամբողջականության կողմնակից և քրդական պետության ստեղծման աներկբա հակառակորդ, Սիրիան ստիպված էր աջակցել այս ուղղությամբ թուրքական կողմից ձեռնարկվող քայլերին:
- 1991-2002թթ. պաղեստինյան հիմնահարցը ինչպես Սիրիայի, այնպես էլ Թուրքիայի արտաքին քաղաքական օրակարգում կարևոր դեր ունեցավ: Սիրիայի պարագայում դա պայմանա-

վորված էր տարածաշրջանում սեփական հեղինակության բարձրացման և մերձավորարևելյան ընթացիկ գործընթացներում ազդեցություն ձեռք բերելու ցանկությամբ. խոսքը հատկապես Իսրայելի ներքաղաքական ու արտաքին քաղաքական գործընթացների վրա ազդելու մասին էր: Անկարայի համար Պաղեստինի հարցը ծառայում էր որպես գործիք՝ արաբական աշխարհի գործերին ավելի ակտիվ մասնակցություն ունենալու, տարածաշրջանում ավելի մեծ հեղինակություն ձեռք բերելու և Իսրայելի հետ գործակցության խորացման համար:

- Պատմականորեն Սիրիա-Լիբանան հարաբերություններն ավանդաբար ավելի սերտ են եղել, քան Լիբանանի հարաբերությունները Թուրքիայի հետ: 1991-2002թթ. էլ այս առումով շոշափելի փոփոխություն չարձանագրվեց. Լիբանանում Սիրիայի ազդեցության պահպանումը պայմանավորված էր ինչպես պատմական գործոններով, այնպես էլ Սիրիայի՝ տարածաշրջանում ազդեցության լծակների տիրապետելու և մերձավորարևելյան գործընթացներում կարևոր դերակատար մնալու հավակնություններով: Թուրքիայի շահերը լիբանանյան հարթակում ածանցվում էին հենց սիրիա-լիբանանյան համագործակցությունից, քանի որ Սիրիան նաև Լիբանանի միջոցով էր իրականացնում հակաթուրքական իր քաղաքականությունը, այդ թվում՝ նրան ներգրավելով «էթնիկ խմբավորումների» քաղաքականության մեջ:
- 1991-2002թթ. Իսրայելի գործոնը տարածաշրջանային քաղաքականության ուղեգծում թե՛ Թուրքիայի, թե՛ Սիրիայի համար առանցքային էր: Եթե 1990-ականների կեսերին Թուրքիան անհանգստացած էր սիրիա-իսրայելական հարաբերությունների ջերմացմամբ, ինչը կարող էր բացասական ազդեցություն ունենալ տարածաշրջանում և առհասարակ արաբական աշխարհում Թուրքիայի դիրքավորման համար, ապա Սիրիան 90-ականների վերջերից անհանգստացած էր թուրք-իսրայելական հարաբերությունների, մասնավորապես՝ դրա ռազմական բաղադրիչի խորացմամբ, որը դիտարկվում էր որպես իրական սպառնալիք տարածաշրջանում սեփական շահերի ու մինչև իսկ սեփական տարածքային ամբողջականության համար:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Ա. Ջուլֆալակյան, Ալեքսանդրետի սանջակի հիմնախնդիրը որպես թուրք-սիրիական հարաբերությունների վրա ազդող պատմական գործոն, Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Լրատու, Գիտական հոդվածների պարբերական ժողովածու, Երևան 2015, էջ 188-202:

2. Ա. Ջուլֆալակյան, Պաղեստինի հիմնահարցը և թուրք-սիրիական հարաբերությունները 20-րդ դարի 90-ականներին, Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Լրատու, Գիտական հոդվածների պարբերական ժողովածու, Երևան 2016, էջ 183-192:

3. Ա. Ջուլֆալակյան, Իսրայելական գործոնը Թուրքիայի և Սիրիայի տարածաշրջանային քաղաքականության համատեքստում, «Ժամանակակից Եվրասիա», Արաբական աշխարհ. Գաղափարական ու քաղաքական նոր միտումներ, հատոր 4(2), Երևան 2015, էջ 87-105:

4. Ա. Ջուլֆալակյան, Ջրային հիմնահարցը թուրք-սիրիական հարաբերություններում 20-րդ դարի 90-ականներին, «Պատմություն և մշակույթ». Հայագիտական հանդես (գիտական հոդվածների ժողովածու), Երևան 2017, էջ 316-322:

5. Ա. Ջուլֆալակյան, Ադանայի պայմանագիրը և թուրք-սիրիական հարաբերությունները մինչև 2002թ., Արաբագիտական ուսումնասիրություններ, հ. 9, Երևան 2017, էջ 147-169:

6. Ա. Ջուլֆալակյան, 1990-91թթ. Իրաքյան ճգնաժամի անդրադարձը տարածաշրջանային գործընթացների վրա. Սիրիական (արաբական) դիտանկյուն, Երևան 2017, էջ 66-90

ДЖУЛФАЛАКЯН АРСЕН ЛЕВОНОВИЧ
ВЗАИМООТНОШЕНИЯ ТУРЕЦКОЙ РЕСПУБЛИКИ И СИРИЙСКОЙ АРАБСКОЙ РЕСПУБЛИКИ В КОНТЕКСТЕ РЕГИОНАЛЬНЫХ ПРОБЛЕМ (1991-2002гг.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности Э 00.02 «Всемирная история, международные отношения».
Защита состоится 10 июля, 2018г., в 14:00, на заседании специализированного совета 006 “Всемирная история, международные отношения”, действующего при Институте востоковедения НАН РА, по адресу: 0019, Ереван, пр. М. Баграмяна, 24/4.

РЕЗЮМЕ

Актуальность темы диссертации обусловлена исключительной значимостью турецко-сирийских взаимоотношений в ближневосточной палитре, считающейся традиционно сложной и проблематичной. В этих отнощениях период с 1991 по 2002 гг. считается периодом коренных изменений, на изучение которого и направлена данная работа. Актуальность темы диссертации обусловлена и тем обстоятельством, что отношения двух соседствующих государств, включающих исторические, территориальные, энергетические и многие иные элементы, десятилетиями находилис в фокусе политических процессов Ближнего Востока, влияя на течение и сущность не только регионального, но и в некоторых случаях международного развития. Важность выбранной темы исследования заключается и в том, что как Турция, так и Сирия имели и продолжают иметь качественно разную, но ощутимую роль в исторической судьбе армянского народа. Поэтому для комплексного понимания взаимоотношений двух государств в настоящем, в том числе проблем политического и военного характера, во многом необходимо иметь представление об исторических основах, обуславливающих данные взаимоотношения.

Цель темы диссертации заключается в исследовании одного из важнейших этапов турецко-сирийских взаимоотношений и выявлении динамической связи их развития с региональными процессами.

Основой научной новизной диссертации является комплексное изучение сирийско-турецких взаимоотношений 1991-2002 гг., обусловленных изменениями, произошедшими в результате регионального развития двусторонних взаимоотношений, а также влиянием данных взаимоотношений на региональное развитие.

Диссертация состоит из введения, двух глав (каждая из которых включает соответствующие параграфы), заключения, списка использованных источников и дополнения.

В **введении** представлены актуальность выбранной темы, задачи и цели исследования, научная новизна, временные рамки исследования, теоретическо-методологическая база, практическая значимость исследования, а также обзор литературы относительно задач исследования.

Первая глава, **“Исторические проблемы турецко-сирийских взаимоотношений”,** состоит из **трех параграфов**. Первый параграф, “Проблема александреттского санджакства в турецко-сирийских взаимоотношениях”, направлен на изучение проблем взаимных территориальных претензий в турецко-сирийских взаимоотношениях с основным акцентом на изучение исторических и политико-правовых фактов принадлежности санджакства Аленсадретты. Второй параграф, “Водная проблематика в турецко-сирийских взаимоотнишениях в конце 80-ых годов 20-ого века”, посвящен проблеме использования водных ресурсов в повестке турецко-сирийских взаимоотношений. Третий параграф, “«Курдская» проблема во взаимоонтошениях Турции и Сирии до конца 80-ых годов 20-ого века”, посвящен влиянию «курдского» фактора в двусторонних отношениях, оценке значимости и роли данного фактора в региональных процессах, а также анализу деятельности “Рабочой партии Курдистана”.

Вторая глава диссертации, **“Турецко-сирийские взаимоотношения в контексте региональных и международных процессов конца 20-ого начала 21-ого веков”,** состоит из **пятн параграфов**. Первый параграф, “Подходы Турции и Сирии относительно иракского кризиса 1990-1991 годов”, представляет военно-политические и политико-исторические основы выявления иракского кризиса 1990-91 гг., а также подходы Турции и Сирии к данному кризису. Второй параграф второй главы, “Позиции Турции и Сирии касательно основных региональных проблем”, состоит из двух частей, посвященных вопросам Ливана и Палестины в контексте турецко-сирийских взаимоотношений в 90-ых годах. Третий параграф второй главы, “Проблема распределения водных ресурсов и курдский вопрос во взаимоотношениях Турции и Сирии в 1990-ых годах”, состоит из двух частей, посвященных анализу вопроса водораздела в двусторонних взаимоотношениях в 90-ых гг. 20-ого века, а также рассмотрению и анализу курдской проблемы в турецко-сирийских взаимоотношениях. Четвертый параграф второй главы, “Фактор Израиля в турецко-сирийских взаимоотношениях 1991-2002 годов”, посвящен различным аспектам взаимоотношений двух государств с Израилем. Последний параграф второй главы, “Динамика развития взаимоотношений Турции и Сирии от договора Аданы до 2002 года”, посвящен предвоенному напряжению 90-ых годов 20-ого века в турецко-сирийских взаимоотношениях, преодоленному с большой трудностью благодаря усилиям стран-посредников и в результате подписания в 1998 году договора Аданы, а затем к формированию атмосферы сотрудничества между Турцией и Сирией в новых условиях.

В **заключении** представлены основные результаты исследования.

ARSEN L. JULFALAKYAN

THE RELATIONSHIP OF THE REPUBLIC OF TURKEY AND SYRIAN ARAB REPUBLIC IN THE CONTEXT OF REGIONAL ISSUES (1991-2002)

The defense of dissertation will take place at 14:00, on 10th of July of 2018, at the meeting of the Specialized council 006 "World History, International Relations" at the Institute of Oriental Studies of NAS RA. Address: Yerevan, 0019, Marshal Baghramyan ave, 24/4.

The dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Philosophy in the field of "World History, International Relations" 07.00.02

SUMMARY

The relevance of the topic of the thesis is connected with the fact that the Turkish-Syrian relations have a crucial role in the complicated and problematic context, traditionally existing in the Middle East. The period of radical changes in that relationship is 1991-2002, and the following study focuses on this work specifically. The importance of the topic of the thesis is also connected with the fact that the relations between the two neighboring countries, including historical, territorial, energy, and series of other components have been in the midst of Middle Eastern political processes for decades, affecting not only regional, but also, in some cases, the course and nature of international developments. Additionally, the relevance of the dissertation is that both Turkey and Syria have had a significant, although different role in the destiny of the Armenian people and they still do. Therefore, in order to fully comprehend the complexities of the relations between these two countries nowadays, including their political and military issues, it is important to be well aware of the historical roots of their relations.

The aim of the thesis is to explore one of the key stages of Turkish-Syrian relations and to address the dynamics of their development with regional processes.

The main scientific novelty of the thesis is that the survey is a complex study of Syrian-Turkish relations from the period of 1991-2002, conditioned by the changes in regional developments in bilateral relations as well as by the impact of these relations on regional developments.

The thesis consists of the introduction, two chapters (each has sub-chapters), the conclusion, list of references and an appendix.

The **introduction** includes the relevence, the goals and problems, the novelty of the thesis, the timetable, theoretical-methodological basis, practical significance, sources of literature and literature theory.

The first chapter is entitled **"Historical Problems in Turkish-Syrian Relations"** and consists of **three sub-chapters**. The first sub-chapter, titled "The Alexandretta's Sanctuary Problem in Turkish-Syrian Relations"**,** addresses the issue of two-sided territorial claims in the Turkish-Syrian relations, focusing mainly on the historical and legal-political realities of Alexandretta's Sanjak.

The second sub-chapter, titled "The Water Problem in the Turkish-Syrian Relations at the End of the 1980s", addresses the issue of the co-use of water resources in the Turkish-Syrian relations agenda. The third chapter has the "Kurdish problem in the Turkish and Syrian relations till the end of the 80s of the 20th century" title and is dedicated to the role of the Kurdish factor in bilateral relations, its role in regional processes, and the analysis of the Kurdish Workers' Party activity.

The second chapter of the thesis is titled **"Turkish-Syrian relations in the late 20th and early 21st centuries in the context of the regional and global processes."** It consists of **five sub-chapters**. The title of the first sub-chapter is "Turkey's and Syria's approaches in 1990-1991 on the Iraqi crisis ", and it reviews and presents the historical and political basis of the Iraq crisis in the 1990-91 and military-political realities, Turkey's and Syria's approaches towards the crisis. The second sub-chapter of the second chapter of the thesis, entitled "Turkey’s and Syria's Position on Regional Fundamental Issues," consists of two parts and is devoted to the Palestinian and Lebanese issues in the context of the Turkish-Syrian relations in the 1990s. The third sub-chapter in the second chapter of the thesis titled "The Problem of Water Resources Distribution and the Kurdish Issue in the 1990s in Turkey and Syria". It consists of two sections devoted to the "Water Problems Analysis" and the Turkish-Syrian Dialogue in Bilateral Relations in the 90s of the 20th Century, and the observation and analysis of the Kurdish problem in the relations.

The fourth sub-chapter of the second chapter of the thesis has the title "Israel's factor in Turkish-Syrian relations in the period of 1991-2002" and is dedicated to the various aspects of relations of the two countries with Israel. In the last sub-chapter of the second chapter is titled "The Dynamics of Turkish-Syrian Relations Development following the Treaty of Adana until 2002," and it also refers to the pre-war tensions in the Turkish-Syrian relations at the end of the 90s of the 20th century, which was overcome with great difficulty with the efforts of mediator countries. The chapter also talks about the atmosphere of Turkish-Syrian relations in the new reality after 1998 as a result of the signing the Adana Treaty.

The **conclusion** sums up the main outcomes of the research.